Հրազենի անվտանգության ստուգացանկ ծնողների համար

ՁԵՐ ՏԱՆԸ

- ☐ Ձենք գնելուց առաջ, մտածեք ձեր ընտանիքը և ունեցվածքն անվտանգ պահելու նվազ վտանգավոր միջոցների մասին, ինչպես՝ գողության դեմ ազդասարքերը, լուսամուտների կողպեքները, շները, և այլն:
- ☐ Ձենք մի գնեք, եթե չգիտեք այն անվտանգ օգտագործել:
- ☐ Հրազենները պետք է պահել չլիցքավորված և կողպած վայրում:
- ☐ Հրազենները պետք է կողպել երեխաներին անհասանելի վայրում: Երեխաները հաճախ դժվարանում են տարբերել խաղալիք զենքը իսկականից:
- ☐ Հրազենի փամփուշտները պետք է կողպել զենքերից առանձին մեկ այլ վայրում:
- ☐ Ձգանների փականքներն օգտակար հավելյալ ապահովություն են չլիցքավորված հրազենների համար: Դրանք պետք է կցվեն չլիցքավորված հրազեններին:
- ☐ Որոշ փականքներ կարող են հանվել առնվազն 6 վայրկյանում:
- ☐ Եթե գիշերը ձեր բարձի տակ առանց փականքի զենք եք պահում, ապա առավոտյան աշխատանքի գնալուց առաջ փականք դրեք վրան:

ՁԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՍՈՎՈՐԵՑՐԵՔ

- ☐ Ձեր երեխաներին բացատրեք, որ զենքերը վտանգավոր են և որ առանց ձեր թույլտվության՝ երբեք չպետք է ձեռք տան զենքերին:
- ☐ Խոսեք ձեր երեխաների հետ այն մասին, որ մեծ տարբերություն կա հեռուսատցույցով կամ ֆիլմերում նրանց տեսած վայրագությունների և իսկական կյանքի վայրագությունների միջև, որտեղ չափահասներն ու երեխաներն իսկապես վնասվում են:
- ☐ Ասացեք ձեր երեխաներին, որ եթե որևէ վայրում զենք գտնեն, չպետք է ձեռք տան այն և պետք է հեռանան վայրից ու գնան տեղեկացնեն որևէ մի չափահասի: Եթե դպրոցում են և տեղյակ են, որ ուրիշ երեխաներ ատրճանակ են կրում, ապա պետք է այդ մասին տեղեկացնեն որևէ չափահասի:

Injury Free coalition for Kids®